# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## 09.08.2019թ. N 09 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

## ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*09 օգոստոս 2019թվականի N94*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի N09 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի.*

*Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝*

***Հաստատել Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի օգոստոսի 9-ի N 09 արտահերթ նիստի օրակարգը.***

*1. Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 19-ի N155 որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը, 2019 թվականի հունիսի 10-ի N 60,61 որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին*

*2.Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 179-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին*

*3.Ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին*

*4. Փոխադրամիջոցների գույքահարկի գումարները վերադարձնելու մասին*

*5. Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարի 25-ի N25 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին*

*6. Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 16-ի N 92 որոշման 1-ին կետի 9-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչելու մասին*

*7. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերը ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին*

*8. Կադաստրային քարտեզում հայտնաբերված անճշտության ուղղում կատարելու և համայնքային սեփականություն ճանաչելու մասին*

*9. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական և բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին*

*Կողմ -8* *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

*ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ*

*ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ*

ՋԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*09 օգոստոսի 2019թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*09 օգոստոս 2019 թվականի N95*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի N155 ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ ԿԵՏԻ 2-ՐԴ ԵՆԹԱԿԵՏԸ, 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 60,61 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի.*

*Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*1.Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 19-ի «Հրազդանի համայնքապետարանի «Աղբահանություն և սանմաքրում» բյուջետային հիմնարկին գույք տրամադրելու մասին» N 155 որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը:*
*2.Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի հունիսի 10-ի «Հրազդանի համայնքապետարանի «Աղբահանություն և սանմաքրում» բյուջետային հիմնարկին գույք տրամադրելու մասին» N 60 որոշումը:*
*3. Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի հունիսի 10-ի «Հրազդանի համայնքապետարանի «Հրազդանքաղլույս» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը գույք տրամադրելու մասին» N 61 որոշումը:*
*4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*Կողմ -8* *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

*ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ*

*ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ*

*ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ*

*ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՈՒՆ*

*ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ*

*ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ*

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

09 օգոստոսի 2019թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*09 օգոստոս 2019 թվականի N96-Ն*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 179-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի.*

*Հրազդան համայնքի ավագանին <u>ՈՐՈՇՈՒՄ Է</u>՝*

*Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի «Հրազդան համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 179-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝*

*Ծախսային մասում՝*

*1. 1 բաժնի 1 խմբի 1 դասի 51 ծրագրի «Վարչական սարքավորումներ» /5122/ հոդվածում «1074.0» թիվը փոխարինել «1000.0» թվով, «Այլ մեքենաներ, սարքավորումներ» /5129/ հոդվածում «1176.0» թիվը փոխարինել «1250.0» թվով, «Աշխատավարձեր և դրան հավասարեցված վճարներ» /4111/ հոդվածում «146129.3.» թիվը փոխարինել «145629.3» թվով:*

*2. 4 բաժնի 2 խմբի 1 դասի 04 ծրագրի (Հողերի ագրոքիմիական հետազոտություն) «Մասնագիտական ծառայություններ» /4241/ հոդվածում «0» թիվը փոխարինել «50.0» թվով:*

*3. 6 բաժնի 6 խմբի 1 դասի 51 ծրագրի «Շենքերի ընթացիկ նորոգում» /4251/ հոդվածում «526.8» թիվը փոխարինել «356.8» թվով, «Հատուկ նպատակային այլ նյութեր» /4269/ հոդվածում «2700.0» թիվը փոխարինել «2577.0» թվով, «Կապիտալ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին» /4655/հոդվածում «0» թիվը փոխարինել «270.0» թվով:*

*4. 9 բաժնի 1 խմբի 1 դասի 51 ծրագրի «Սուբսիդիա» /4511/ հոդվածում 420404.0» թիվը փոխարինել «420874.0» թվով:*

*5. 1 բաժնի 1 խմբի 1 դասի 51 ծրագրի (Վարչական շենքի պահպանում և սպասարկում) «Պարտադիր վճարներ» 4823 հոդվածում » «0» թիվը փոխարինել «3,0» թվով:*

*Կողմ -8* *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

*ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ*

*ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ*

ՋԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

*09 օգոստոսի 2019թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*09 օգոստոս 2019 թվականի N97*

## *ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի.*

*Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*1.Հրազդան քաղաքի Շահումյան փողոցի 188 տան բնակիչ Արմեն Հայրապետյանին հատկացնել 30000 /երեսուն հազար/ դրամ գումար, դպրոցահասակ երեխաներին անհրաժեշտ հագուստ ձեռք բերելու համար:*
*2.Հրազդան քաղաքի Վանատուր 129 տան բնակչուհի Քնարիկ Հովսեփյանին հատկացնել 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ գումար փլված տան վերանորոգման համար:*
*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*Կողմ -8* *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

*ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ*

*ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ*

*ՋԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ*

*ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՈՒԵԼ*

*ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ*

*ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ*

*ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ*

*ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*09 օգոստոսի 2019թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# ՈՐՈՇՈՒՄ

*09 օգոստոս 2019 թվականի N98*

## *ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հարկային օրենսգրքի 252-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N920-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի, հիմք ընդունելով Կոտայքի մարզի, Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 37 շենքի 95 բնակարանի բնակիչ Վիգեն Հարությունյանի 2019 թվականի հուլիսի 30-ի N Կ-858, Հրազդան քաղաքի Շահումյան փողոցի 115 Ա տան բնակիչ Դավիթ Սարգսյանի 2019 թվականի հուլիսի 26-ի N Կ-854, Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 63 շենքի 17 բնակարանի բնակիչ Հարութ Աղուրյանի 2019 թվականի հուլիսի 31-ի N Կ-863, Հրազդան քաղաքի Պ.Դուրյան փողոցի 12 շենքի 30 տան բնակչուհի Կարինե Առաքելյանի 2019 թվականի հուլիսի 25-ի N Կ-844, Հրազդան քաղաքի ՋԷԿ ի հանրակացարանի 8 բնակարանի բնակիչ Աշոտ Դիլաքյանի 2019 թվականի հուլիսի 8-ի N Կ-765, Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 129 շենքի 8 տան բնակիչ Յաշա Միրաքյանի 2019 թվականի հուլիսի 17-ի NԿ-800 դիմումները.*

*Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*1.Հրազդանի համայնքապետարանի 900125001215 հաշվեհամարին, որպես փոխադրամիջոցի համար գույքահարկ վճարված գումարներից հետ վերադարձնել վաճառքից հետո առաջացած գերավճարի չափով Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 37 շենքի 95 բնակարանի բնակիչ Վիգեն Հարությունյանին 12751 /տասներկու հազար յոթ հարյուր հիսունմեկ / դրամ, Հրազդան քաղաքի Շահումյան փողոցի 115 Ա տան Դավիթ Սարգսյանին 4567/ չորս հազար հինգ հարյուր վաթսունյոթ/ դրամ, Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 63 շենքի 17 բնակարանի բնակիչ Հարութ Աղուրյանին 63826 /վաթսուներեք հազար ութ հարյուր քսանվեց/ դրամ, Հրազդան քաղաքի Պ. Դուրյան փողոցի 12 շենքի 30 տան բնակչուհի Կարինե Առաքելյանին 7359 /յոթ հազար երեք հարյուր հիսունինը/ դրամ, Հրազդան քաղաքի ՋԷԿ-ի հանրակացարանի 8 բնակարանի բնակիչ Աշոտ Դիլաքյանին 1404 /մեկ հազար չորս հարյուր չորս/ դրամ, Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 129 շենքի 8 տան բնակիչ Յաշա Միրաքյանին 21021 /քսանմեկ հազար քսանմեկ/ դրամ գումարները:*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՈՒԻՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

09 օգոստոսի 2019թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*09 օգոստոս 2019 թվականի N99*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի N25 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, 3-րդ կետի.*

*Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*1.Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարի 25-ի «Հրազդան համայնքի 2019-2023 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N25 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:*
*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*Կողմ -8* *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

*ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ*

*ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ*

*ՋԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ*

*ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՈՒՆ*

*ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ*

*ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ*

*ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ*

*ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*09 օգոստոսի 2019թ.*
*ք.Հրազդան*

*Հավելված*
*Հրազդան համայնքի ավագանու*
*2019 թվականի օգոստոսի 9-ի*
*թիվ 99 որոշման*

*Հավելված*
*Հրազդան համայնքի ավագանու*
*2019 թվականի փետրվարի 25-ի*
*թիվ 25 որոշման*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

## ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

## 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ք. ՀՐԱԶԴԱՆ 2019թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԱԽԱԲԱՆ---------------------------------------------------------------------------------------------------2

2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ-----------------------------------------------4

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ -------- 23

4. ՀԶԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ-------------------------------------------------------------------36

5. ՀԶԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ---------------------------------------------------------------------------38

6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ------------------------------------------------------------------------------------41

# 1. ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2019-2023 թթ. զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ծրագիր:

ՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները:

Ներկայացվող ՀԶԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Հրազդան համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ արտադրական կազմակերպությունների, փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի և Հրազդան համայնքի ավագանու հետ միասին մշակել է համայնքի 2019-2023թթ. ՀԶԾ-ն:

Համայնքի 2019-2023թթ. ՀԶԾ-ում ներառված են Հրազդան համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ, համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ, աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ, համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ: ՀԶԾ-ն ներառում է նաև Հրազդան համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն՝ Հրազդան համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Հրազդանի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

Փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձվել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական

հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀՋԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

# 2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## *2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

*Հրազդան քաղաքը (մինչև 1959 թվականը՝ ներքին Ախտա), քաղաք՝ 1959 թվականից, 1962 թվականից հանրապետության ենթակայության քաղաք: Երևանից 40 կմ. հյուսիս-արևելք, ծովի մակերևույթից 1600-1750 մ բարձրության վրա՝ զառիթափ լանջերով և փոքրիկ հարթ տեղամասերով տեղանքում: Առավելագույն բարձր կետը Թեժ լեռան կատարն է՝3101 մ : Հյուսիսում ձգվում են Մարմարիկի վտակներով խիստ մասնատված Փամբակի լեռնաշղթայի լանջերը, արևելքում՝ Գեղամա լեռնաշղթայի հյուսիս-արևմտյան լեռնաճյուղերն ու լավային հոսքերը: Հարավ-արևելքում բարձրանում են Գութանասար, Մենակսար հրաբխային կոները: Փամբակի և Ծաղկունյաց լեռների լանջերին տարածված են թխկու, կաղնու, արոսենու անտառները:*
*Հրազդան քաղաքի ձգվածությունը կազմում է մոտ 25 կմ:*

*1960-70 թթ. քաղաքի շրջագծի մեջ են մտել Մաքրավան, Աթարբեկյան /Վանատուր/, Ջրառատ և Կաքավաձոր գյուղերը: Քաղաքի տարածքում հայտնաբերվել են մ.թ.ա. II-I հազարամյակների դամբարաններ: Ճարտարապետական հուշարձաններից նշանավոր է Մաքրավանի հուշարձանախումբը (XIII դար): Պահվել է XIII դարի քարավանատունը:*
*Հնում մտել է Մեծ Հայքի Այրարատ նահանգի մեջ:*
*Հրազդանի առաջին գլխավոր հատակագիծը մշակվել է 1927-28-ին (ճարտարապետ Ալեքսանդր Թամանյան): Նախագիծը ընդգրկում էր Ախտա և Ալափարս գյուղերի տարածքը, որի ամֆիթատրոնաձև կառուցապատումը ուղղված էր դեպի Հրազդան գետը (վերջինիս ափամերձ մասը նախատեսված էր օգտագործել որպես հանգստի գոտի): 1961-63 թթ. կազմվել է քաղաքի գլխավոր հատակագծի նոր նախագիծ (ճարտարապետներ՝ Մ.Գրիգորյան, Է.Ալթունյան և ուրիշներ): 1969թ. մշակվել է քաղաքի վարչատարածքային մշակութային կենտրոնի նախագիծը (ճարտարապետներ Մ.Գրիգորյան, Մ.Մանուկյան, Վ.Տոնիկյան, Տ.Բալայան):*
*Մինչև 1990-ական թթ. կեսերը քաղաքում գործել են (մի քանիսը գործում են նաև այսօր) Հրազդանի ՊՇԷԿ-ը, ՋԷԿ-ը, Ցեմենտի գործարանը, Պանելային տնաշինական կոմբինատը, Ջրառատի կաթի համալիրը, Հացի գործարանը, «Կեչառք» արտադրական միավորումը, «Հրազդանմեքենա» ա/մ և այլ հիմնարկներ ու կազմակերպություններ: Քաղաքն ունի 1 դրամատիկական թատրոն,1 պատկերասրահ, 2 թանգարան, 7 գրադարաններ, 1 մասնավոր ԲՈՒՀ, 2 ուսումնարան, 2 քոլեջ, 1 միջնակարգ, 9 հանրակրթական, 3 ավագ դպրոցներ, 12 մսուր-մանկապարտեզներ, 2 սպորտային, 2 երաժշտական, 2 մանկական արվեստի դպրոցներ, քաղաքապետարանի մանկապատանեկան ստեղծագործական, մշակույթի և երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոններ, ձմեռային մարզաձների, մանկապատանեկան մարզադպրոցներ:*
*Քաղաքի գրեթե կենտրոնում է գտնվում Սևան- Հրազդան կասկադի և համապատասխան հիդրոհամակարգի կարևոր ջրամբարը, որը կարգավորում է ամբողջ համակարգի ջրամատակարարումը:*
*Հրազդան քաղաքի հարավային մասով է անցնում Երևան-Սևան միջպետական մայրուղին, Երևան-Ծաղկաձոր, Երևան-Հանքավան ճանապարհները:*
*Ձմռանը ջերմաստիճանը՝ -28-ից -30$^0$ է, իսկ ամառը զով է, ամենաբարձր ջերմաստիճանը +30$^0$ C-ից գրեթե չի անցնում:*
*Հրազդան քաղաքը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի մարզկենտրոնն է:*

Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (05.02.2019 թ. դրությամբ)

| Հ/Հ | Ցուցանիշները | Մարդ |
|---|---|---|
| 1. | Բնակչության թվաքանակը, մարդ | 58288 |
| 2. | Տնային տնտեսությունների թվաքանակը | 12690 |
| 2.1 | այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում /վագոն, տնակ/ բնակվող | 370 |
| 2.2 | կիսակառույց տներում բնակվող | 0 |
| 3. | Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը | 2340 |

Համայնքի բնակչության 49% կազմում են տղամարդիկ և 51% կանայք: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.07.2018 թ. Դրությամբ)

| Հ/Հ | Ցուցանիշները | Ընդամենը | Կանայք | Տղամարդիկ |
|---|---|---|---|---|
| 1. | Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝ | 44350 | 21731 | 22619 |
| | մինչև 1 տարեկան | 564 | 266 | 298 |
| | 1-2 տարեկան | 1306 | 640 | 666 |
| | 3-5 տարեկան | 2047 | 925 | 1122 |
| | 6-9 տարեկան | 3149 | 1458 | 1691 |
| | 10-14 տարեկան | 3555 | 1676 | 1879 |
| | 15-17 տարեկան | 1856 | 887 | 969 |
| | 18 և ավելի տարեկան | 34315 | 17288 | 17027 |
| 2. | Կենսաթոշակառուներ (ներառյալ հաշմանդամներ) այդ թվում՝ | 7560 | 5083 | 2477 |
| | Տարիքային և աշխատանքային | - | - | - |
| 3. | Միակողմանի ծնողազուրկ երեխաներ | 35 | 16 | 19 |
| 4. | Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ | 10 | 4 | 6 |
| 5. | Հաշմանդամ երեխաներ | 129 | 60 | 69 |
| 6. | Խնամակալության հանձնված երեխաներ | 67 | | |
| 7. | Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ | 1 | 1 | |
| 8. | Արցախյան պատերազմի մասնակիցներ | 670 | | |
| 9. | Հաշմանդամներ | 1897 | 929 | 968 |
| 10. | Զբաղվածներ | **11147** | | |
| 11. | Գործազուրկներ(գրանցված) | **1893** | 1270 | 623 |
| 12. | Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 13. | Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը | 90 | | |

Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով:

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Ծ Ք

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքում ընդգրկված են՝

1. Հրազդան համայնքի ղեկավար
2. Հրազդան համայնքի ղեկավարի տեղակալներ
3. Հրազդան համայնքի ղեկավարի խորհրդականներ
4. Հրազդան համայնքի ղեկավարի օգնական
5. Մամուլի քարտուղար
6. Հրազդան համայնքի տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու
7. Աշխատակազմի քարտուղար
8. Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում ընդգրկված համայնքային ծառայողներ

9. Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներ

- Ֆինանսական բաժին
- Հարկային բաժին
- Տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժին
- Տրանսպորտի, առևտրի սպասարկման և կանոնակարգման բաժին
- Բնակֆոնդի շահագործման և կոմունալ տնտեսության բաժին
- Կրթության, մշակույթի և սպորտի բաժին
- Ներքին աուդիտի բաժին

10. Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում

- Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժին

## ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Հրազդան համայնքի ղեկավարը ընտրվել է 2018թ. հոկտեմբերի 21-ին, համայնքի ավագանին՝ բաղկացած 14 անդամներից, ընտրվել են 2016թ. հոկտեմբերի 2-ին:

Համայնքապետարանի աշխատակազմը բաղկացած է 80 աշխատակիցներից՝ հետևյալ կառուցվածքով.

1. Համայնքի ղեկավար - 1
2. տեղակալ - 1
3. օգնական - 2
4. խորհրդականներ - 2
5. մամուլի քարտուղար-1
6. տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու - 1
7. համայնքային ծառայողներ - 65
8. տեխնիկական աշխատող - 4

## ՔԱՂԱՔԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Համայնքը նախկինում եղել է արդյունաբերական զարգացած կենտրոն: Այժմ այդ արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասը չեն գործում, կամ եթե գործում են, ապա ոչ իրենց հզորությունների ծավալով:*

*Քաղաքի տարածքում գործում են ավելի քան 20 ձեռնարկություններ, որոնցից խոշորներն են.*

1. *«Հրազդան ՋԷԿ»*
2. *«Ցեմենտի գործարան»*
3. *«ՀրազՋԷԿ» 5-րդ բլոկ*
4. *«Շինինդուստրիա»*
5. *«Էներգոցանց»*
6. *«Նորոգշին»*
7. *«Մեքենաշինարար»*
8. *«Վորքինգ-ֆորմս»*
9. *«Հրազդան Ճ.Շ.Շ.Ջ»*
10. *«Եվրո-Քափ»*
11. *«Հարվալ-մաշինքրի»*
12. *«Ար-Ձեր-մեկ»*
13. *«Մակու օղակ»*
14. *«Կեչառք»*
15. *«Ինվեստըմթ Մեդիա»*
16. *«Վիլ ֆուդ»*
17. *«Էներգոցանցշին»*

*Մյուսները անհատ ձեռնարկատերեր են, որոնք զբաղված են հացի, հացամթերքների արտադրությամբ:*

*Գործունեության բնագավառներն են՝ էներգետիկ, ցեմենտ, վերամշակող ռադիոէլեկտրոնային սարքեր, հագուստ, տրիկոտաժ, կաթնամթերք, հացամթերք:*

*Արտադրատեսակներ՝ էլեկտրաէներգիա, ցեմենտ, կլինկեր, կիսահաղորդիչներ, ռադիոտեխնիկական սարքեր, վարտիք վերնաշապիկներ, կանացի ներքնահագուստ, տրիկոտաժ, հաց, բուլկեղեն և այլն:*

*Վերը նշված ձեռնարկություններում աշխատում են ավելի քան 3000 գործառուներ:*

## ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

- Հրազդան քաղաքն ունի 302 բազմաբնակարան բնակելի շենքեր՝ 10450 բնակարաններով: Բազմաբնակարան շենքերից 4-ը՝ մեկ հարկանի է, 31-ը՝ երկհարկանի, 4-ը՝ եռահարկ, 40-ը՝ չորս հարկանի, 102-ը՝ հինգ հարկանի, ինը և ավելի բարձրահարկ շենքեր՝ 121:
- 302 բազմաբնակարան շենքերից 140-ը ունեն հարթ տանիքներ, իսկ 162-ը՝ թեք տանիքներ:
- Բնակֆոնդի ընդհանուր և բնակելի մակերեսները կազմում են 668239,8մ$^2$, որից 1050 մ$^2$ համայնքային սեփականություն է, իսկ 667189,8 մ$^2$ մասնավոր / սեփականաշնորհված/: Շենքերի սպասարկման գործընթացը կազմակերպվում է 12 /տասներկու/ համատիրությունների կողմից: Բազմաբնակարան բնակելի շենքերի վերելակների թիվը՝ 221-ն է, աշխատում է 145 վերելակ:
- Վարչական տարածքում կան 3600 առանձնատներ: Բազմաբնակարան շենքերից վթարային են Միկրոշրջան թաղամասի թիվ 54 և 60 շենքերը , և առանձնատներից վթարային են թվով 13-ը: Քաղաքի տարածքում կան 5 /հինգ/ բազմաբնակարան կիսակառույց շինություններ:
- Ոչ բնակելի տարածքների թիվը՝ 12, մակերեսը՝ 11675,52մ$^2$:
- Քաղաքի տարածքում հաշվառված են 923 ավտոտնակներ, որից օրինական են 761-ը, ինքնակամ՝ 162-ը:
- Քաղաքում առկա են բնակարանների և բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքներ, որոնց մի մասը կազմում են զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների ընտանիքներ:

## ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

- Քաղաքի վարչական տարածքը – 15343.72 հա
- Արտադրական նշանակության հողեր - 846.63 հա
- Գյուղատնտեսական նշանակության հողեր - 11053.08 հա
- Գերատեսչահան հիմնարկների զբաղեցրած հողեր - 48.2 հա
- Հանգստի գոտիներ – 35.24հա
- Ջրային ֆոնդեր - 202.55 հա
- այլ - 263.89 հա

- Բնակավայրի տարածքը - 1701.09 հա
- Հողի սեփականաշնորհման մասնակցած ընտանիքների թիվը - 4700
- Մեկ հողաբաժնի չափը մինչև 0.36 հա
- Քաղաքի սեփականություն համարվող հողեր – 8018.09 հա
- Օտարված և օգտագործման տրամադրված հողեր - 491.30 հա

## ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- Քաղաքում գործում է խմելու ջրի ջրամատակարարման և կոյուղու կենտրոնացված համակարգ: Այս ծառայությունների ոչ բավարար մակարդակը պայմանավորված է ներքին կոմունիկացիոն ցանցի ֆիզիկական մաշվածությամբ:
- Շենքերի կենցաղային աղբը կուտակվում է քաղաքի տարածքում հավասարաչափ տեղադրված աղբարկղերի մեջ՝ կուտակված աղբը ամեն օր սահմանված գրաֆիկով «Աղբահանություն և սանմաքրում» բյուջետային հիմնարկի աղբատար ավտոմեքենաներով տեղափոխվում է քաղաքի ծայրամասում գտնվող բացօթյա աղբավայր:
- Սեփական թաղամասերում նույնպես պարբերաբար կատարվում է աղբահանություն՝ սահմանված գրաֆիկով:
- Ամեն գարնանը քաղաքի փողոցներում և բակերում կազմակերպվում է մասսայական ծառատունկ: Անցկացվում են շաբաթօրյակներ քաղաքի սանիտարական մաքրությունը պատշաճ մակարդակի վրա պահելու համար:
- Կազմակերպել Հրազդան գետի հունի մաքրման, ինչպես նաև սելավատարների մաքրման և վերականգնման աշխատանքներ:
- Կանաչ գոտիների ընդլայնման և վերականգնման աշխատանքներ /ծառեր, թփեր, գազոններ/ և ոռոգման համակարգի նոր ջրագծերի անցկացման աշխատանքներ:

## ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

- Քաղաքի փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 194.4 կմ, իսկ մակերեսը՝ 1 մլն 749600քմ, կամուրջների քանակը՝ 12: Կա մեկ սելավատար՝ 5500մ երկարությամբ:
- Քաղաքի վարչական տարածքում հասարակական տրանսպորտի գործունեությունը /ուղևորափոխադրումները/ իրականացվում է ավտոբուսների և միկրոավտոբուսների միջոցով /թիվ 3, 4 և Կաքավաձոր երթուղիներ/:
- Սպասարկող կազմակերպության տրանսպորտային միջոցները նորմալ են և տեխնիկապես ի վիճակի են ուղևորափոխադրումներ կատարելու համար, նյութատեխնիկական բազան լրիվ թարմացված է:
- Քաղաքի վարչական տարածքի փողոցներում տեղադրված են երթևեկության նշաններ՝անհրաժեշտ կանոնակարգով:

## ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐ

- Քաղաքի տարածքում առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի օբյեկտների թիվը, այդ թվում՝
  - առևտրի փոքր, միջին և խոշոր օբյեկտներ - 330
  - շուկաներ - 1
  - բենզինի լցակայաններ - 4
  - գազի լիցքավորման կետեր - 7

- հեղուկ գազի լցակայաններ - 1
- հանրային սննդի օբյեկտներ - 45

- Հիմնականում կարգավորված են այդ օբյեկտների տեղաբախշման և արտաքին համաչափության հարցերը: Պարբերաբար ստուգումներ են կատարվում՝ բյուջե կատարած մուծումները և կրպակների չափերը համապատասխանում են նախագծերին:

## ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲԱԺԻՆ

*Համայնքի ենթակայության տակ գործող նախադպրոցական հաստատությունները, երաժշտական և արվեստի դպրոցները ապահովված են մասնագիտական կադրերով, որոնց շնորհիվ պահպանվում է աշխատանքային բնականոն ռիթմը: Քաղաքում գործում է Հրազդանի Երկրագիտական թանգարանը, պատկերասրահը:*

*Մանկապարտեզները ապահոված են տիպային շենքերով, ջրով, էլեկտրաէներգիայով, պարբերաբար կատարվում է աղբահանություն, շենքերն ունեն կապիտալ և մասնակի վերանորոգման անհրաժեշտություն:*

***Մանկապարտեզների հիմնախնդիրներն են՝***

- ✓ Շենքերի կապիտալ վերանորոգում
- ✓ Ջեռուցման ապահովում
- ✓ Բակերի կապիտալ վերանորոգում
- ✓ Ոռոգման ջրագծերի բարելավում
- ✓ Տնտեսական ապրանքների, խաղալիքների և գույքի ձեռքբերում:

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Հրազդանի տարածքում գործում են

- «Հրազդան բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 80 մահճակալ տեղով, 449 աշխատողներով, որից 334-ը բուժ. աշխատող:
- Հրազդանի մարզային արյան բանկ 8 աշխատողներով, որից 5 բուժ. աշխատող:
- Թվով 15 ատամնաբուժարան:

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ ՔԿԱԳ

Գործառույթ

Տարածքային բաժինը իրականացնում է գրանցումները Հայաստանի Հանրապետության ՔԿԱԳ օրենքի սահմաններում:

Առաքելություն

- Կատարում է քաղաքացիների ծննդյան, մահվան, ամուսնության, ամոլություն, որդեգրման, հայրության ճանաչման ակտերի գրանցումներ, ինչպես նաև ուղղման, փոփոխման, ծննդյան ակտերի վերականգնման գործընթացներ:
- Կատարում է արխիվային գործ:
- Աջակցում է ծննդյան վկայական չունեցող երեխաների ծննդյան ակտային գրանցումները կատարելու և ծննդյան վկայական տրամադրելու:

Ռազմավարական խնդիրներ

Կատարելագործել ՔԿԱԳ բաժնի աշխատանքային գործառույթները, բարձրացնել քաղաքացիների սպասարկման մակարդակը, ՔԿԱԳ բաժնի հետ համագործակցող հիմնարկ-ձեռնարկությունների համատեղ աշխատանքի որակը:

1. Գույքի ձեռքբերում

*ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ*

Ներքին աուդիտը հանդիսանում է անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ, որն ուղղված է կազմակերպության կառավարչական գործընթացների, ներքին հսկողության համակարգի, ռիսկերի կառավարման գործընթացների համակարգված և կարգավորված գնահատմանը և դրանց բարելավման միջոցով կազմակերպության նպատակների արդյունավետ իրականացմանը:
Համայնքապետարանի ներքին աուդիտի բաժինը գործում է համայնքի ղեկավարի ենթակայությամբ: Ներքին աուդիտի բաժինը կազմված է երկու տեսակ հիերարխիկ պաշտոններից՝ ներքին աուդիտի բաժնի պետ և առաջադրանքի աշխատանքային խմբի ղեկավար: Համայնքապետարանի ներքին աուդիտի բաժինն աշխատանքների կազմակերպումն իրականացնում է «Ներքին աուդիտի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքին, ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերին և ներքին աուդիտի կանոնակարգի դրույթներին համապատասխան:
Ներքին աուդիտն ընդգրկում է կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր գործառույթները:
Ներքին աուդիտի գործունեության նպատակներից է.
1.Համայնքի ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին հավաստիացնել, որ համայնքապետարանի բաժինները և համայնքապետարանի ենթակայությամբ գործող կազմակերպություններն ու հիմնարկները պատշաճորեն կատարում են իրենց վրա դրված պարտականությունները:
2.Օժանդակել վերոնշյալ հիմնարկներին, կազմակերպություններին և բաժիններին՝ հասնել իրենց առջև դրված նպատակներին՝ բարելավելով համայնքապետարանի համակարգերը և ծառայությունները:
3.Ապահովել աշխատակիցների վարքագծի համապատասխանությունը սահմանված վարքագծի կանոններին:
4.Նվազեցնել վատնումների և այլ չարաշահումների դեպքերի տեղի ունենալու հավանականությունը:
Ներքին աուդիտի բաժնի հետագա զարգացման համար ներքին աուդիտի բաժինն իրականացնում է վերահսկման և ընթացիկ դիտարկման գործընթացներ, ապահովում է աշխատակիցների մասնագիտական կարողունակության օպտիմալ մակարդակը:

## ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Քաղաքն ունի՝

- Քաղաքային զբոսայգի - 1
- հանգստի գոտիներ - 4
- խաղահրապարակ - 55
- բակային տարածքներ – 210

### *2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ*

Հրազդանի քաղաքային համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի15-ի N 136-Ն որոշմամբ հաստատված 2018 թվականի բյուջեն եկամտային մասով կազմել է **1279795.7** հազար դրամ, ծախսերի գծով՝ **1279795.7** հազար դրամ: Հրազդանի քաղաքային համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 15-ի թիվ 08-Ն որոշմամբ 2018 թվականի բյուջեն (ճշտված բյուջե) եկամտային մասով կազմել է **1279978.4** հազար դրամ, ծախսերի մասով՝ **1279978.4** հազար դրամ: 2018 թվականի բյուջեի եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է **45.6%՝ 583027.9** հազար դրամ:

Աղյուսակ 3. Հրազդան համայնքի հանրակրթական դպրոցների, նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների, նախնական մասնագիտական կրթական հաստատության վերաբերյալ ցուցանիշներ

| Հ/h | Հաստատության անվանումը | Աշխատողների թիվը | Սովորողների թիվը |
|---|---|---|---|
| 1. | N2 մանկապարտեզ | 11 | 13 |
| 2. | N4 մանկապարտեզ | 27 | 107 |
| 3. | N5 մանկապարտեզ | 20 | 97 |
| 4. | N6 մանկապարտեզ | 26 | 103 |
| 5. | N7 մանկապարտեզ | 20 | 75 |
| 6. | N8 մանկապարտեզ | 28 | 122 |
| 7. | N9 մանկապարտեզ | 19 | 57 |
| 8. | N11 մանկապարտեզ | 25 | 123 |
| 9 | N12 մանկապարտեզ | 46 | 322 |
| 10 | N13 մանկապարտեզ | 35 | 180 |
| 11 | N15 մանկապարտեզ | 23 | 100 |

| | | | |
|---|---|---|---|
| | | | |
| 12 | N16 մանկապարտեզ | 32 | 155 |
| 13 | N1 երաժշտական դպրոց | 22 | 205 |
| 14 | N2 երաժշտական դպրոց | 28 | 257 |
| 15 | Երվանդ Քոչարի անվան մանկական արվեստի դպրոց | 17 | 174 |
| 16 | Կոստան Զարյանի անվան մանկական արվեստի դպրոց | 14 | 78 |
| 17 | Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն | 16 | 86 |
| 18 | Դրամատիկական թատրոն | 12 | - |
| 19 | Մանկակապատանեկան սպորտդպրոց | 13 | 177 |
| 20 | Երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոն | 14 | 250 |

## *2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ*

### *ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐ ՝ ԱՐԵՎԵԼՔ " ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ*

Հրազդանի համայնքապետարանը ակտիվ մասնակցություն ունեցավ 26.10.2016թ. Երևանում մեկնարկված բարձր մակարդակի համաժողովին՝ նվիրված Եվրամիության, Արևելյան գործընկերության երկրներում կայուն զարգացման աջակցությանը:

Հրազդան քաղաքը Հայաստանից առաջին համայնքապետարաններից է, որ միացել է Քաղաքապետերի դաշնագրին /21.05.2013թ/, որը շատ հաջող նախաձեռնություն է, նվիրված կլիմայի փոփոխության խնդիրներին , էներգախնայողության և էներգետիկ արդյունավետության զարգացմանը:

**Քաղաքապետերի դաշնագիր ' Արևելք (CoM East)'** ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող նախագիծ է, որի նպատակն է Արևելյան Գործընկերության երկրներում ներկայացնել ԵՄ կլիմայի և էներգետիկայի նախաձեռնությունը: Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելքը աջակցում է տեղական իշխանությունների և էներգետիկայի կայուն զարգացման կանոնակարգերի ներդրման գործում՝ նվազեցնելով նրանց կախվածությունը հանածո վառելիքից, բարելավելով էներգետիկ ողորտի անվտանգությունը, և խթանում է իրենց Ներդրումը կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացմանը և աղապտացմանը:

Այդ նպատակին հասնելու. համար քաղաքային իշխանությունները մշակել են և իրականացնում են Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրեր (ԿԷԶԳԾ), որոնցում գնահատվում են քաղաքային համայնքում ելակետային տարում $CO_2$-ի արտանետումներն ըստ հիմնական

աղբյուրների, ինչպես նաև նկարագրվում են այդ արտանետումների նվազեցմանն ուղղված միջոցառումները, դրանց իրականացման ժամկետները և ֆինանսավորման աղբյուրները:
Այժմ Եվրոմիության Քաղապետերի դաշնագիրը բոլորովին նոր տնտեսական զարգացման նախաձեռնությանբ է հանդես գալիս, որը աշխատելու է բոլոր տեղական համայնքների հետ Արևելյան գործընկերության երկրներում՝ ամրապնդելով տեղական տնտեսական զարգացում:
Եվրամիությունը պատրաստ է տարբեր նախագծերի միջոցով աջակցել Հայաստանին՝ երկրի շրջանների հավասար և կայուն զարգացման գործում, որպեսզի փակվի ճեղքը Երևանի ու մյուս շրջանների միջև, որ մայրաքաղաքն ու մյուս շրջանները հավասարապես զարգանան:

## *ԿՈՏԱՅՔԻ ԿՈՇՏ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ*

2016թ. ապրիլի 5-ին Հայաստանի Հանրապետության, ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության, և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ Բանկ), Ծրագրի շահառու համայնքապետարանների և Բանկի միջև ստորագրվել են «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) վարկային և իրականացման աջակցության համաձայնագրերը:
Նպատակն է կառուցել և շահագործել ԵՄ չափանիշներին համապատասխան տարածաշրջանային աղբավայր Հրազդանում, որտեղ կհավաքվի ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում գոյացած աղբը:
Ծրագրի արժեքը՝ 11 մլն. Եվրո:
***Ծրագրի շահառուներ*** ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի, Բյուրեղավանի, Եղվարդի, Ծաղկաձորի, Նոր Հաճնի, Հրազդանի, Չարենցավանի և Գեղարքունիքի մարզի Սևանի, Գավառի, Մարտունու, Վարդենիսի և Ճամբարակի համայնքներ:

## *2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ*

*Համայնքի ֆինանսական իրավիճակը վերլուծելիս պետք է հստակ տարանջատել՝*

- *համայնքի բյուջեն (եկամտային և ծախսային մասերով),*
- *ծրագրերի իրականացման համար համայնքներին հասանելի այլ միջոցներ (աղբյուրներ և ծախսային ուղղություններ):*

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին (աղյուսակ 4):

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր քիչ են կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից՝ ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և դոնոր կազմակերպությունների հաշվին:

Աղյուսակ 4. Համայնքի 2017-2018թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2019-2023թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

| Հ/հ | Մուտքերի անվանումը | 2017թ. փաստ. | 2018թ. փաստացի 01.12.2018 | 2019թ. կանխ. | 2020թ. կանխ. | 2021թ. կանխ. | 2022թ. կանխ. | 2023թ. կանխ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)* | 1123997.354 | 1153262.058 | 1303517.8 | 1220335.6 | 1131335.6 | 1138235.6 | 1144335.6 |
| I. | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)* | | | | | | | |
| 1 | ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ | 213795.044 | 250037.097 | 274050.0 | 222700.0 | 225000.0 | 231600.0 | 235200.0 |
| 1.1 | Գույքային հարկեր անշարժ գույքից | 120885.002 | 130787.316 | 156000.0 | 128700.0 | 129000.0 | 133600.0 | 135700.0 |
| | Գույքահարկ շենքերի և շինությունների համար | 81477.761 | 86295.174 | 104500.0 | 93400.0 | 93500.0 | 93600.0 | 93700.0 |
| | Հողի հարկ | 39407.241 | 44492.142 | 51500.0 | 35300.0 | 35500.0 | 40000.0 | 42000.0 |
| 1.2 | Գույքային հարկեր այլ գույքից | 54014.462 | 77900.141 | 69400.0 | 51000.0 | 52000.0 | 54000.0 | 55000.0 |
| | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 54014.462 | 77900.141 | 69400.0 | 51000.0 | 52000.0 | 54000.0 | 55000.0 |
| 1.3 | Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ | | | | | | | |
| | Տեղական տուրքեր | 29159.78 | 30069.94 | 33650.0 | 32000.0 | 32500.0 | 33000.0 | 33500.0 |
| 1.4 | Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ | | | | | | | |
| | Պետական տուրքեր | 9735.8 | 11279.7 | 15000.0 | 11000.0 | 11500.0 | 11000.0 | 11000.0 |
| 1.5 | Այլ հարկային եկամուտներ | | | | | | | |
| | Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | մասհանումներ | | | | | | | |
| | Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ | | | | | | | |
| 2 | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 636207.8 | 656289.9 | 676333.3 | 699635.6 | 699635.6 | 699635.6 | 699635.6 |
| 2.1 | Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | |
| 2.2 | Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | |
| 2.3 | Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | |
| ա) | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 620735.8 | 620735.8 | 620735.8 | 686333.3 | 686333.3 | 686333.3 | 686333.3 |
| բ) | Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ | | 727.20 | 55597.5 | | | | |
| գ) | Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 15204.0 | 13302.3 | | | | | |
| դ) | ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | |
| 2.4 | Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | |
| ա) | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | 21524.6 | | | | | |
| բ) | ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | |
| 3 | ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ* | 46056.139 | 58410.6 | 289117.5 | 245300.0 | 153700.0 | 153000.0 | 155100.0 |
| 3.1 | Տոկոսներ | | | | | | | |
| 3.2 | Շահաբաժիններ | | | | | | | |
| 3.3 | Գույքի վարձակալությունից եկամուտներ | 36753.352 | 31040.685 | 44936.0 | 33000.0 | 34400.0 | 32000.0 | 31500.0 |
| | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 16852.914 | 13548.843 | 25000.0 | 22000.0 | 23000.0 | 20000.0 | 20500.0 |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 4495.350 | 2670.2 | 3500.0 | 2000.0 | 2100.0 | 2200.0 | 2500.0 |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող | 1400.0 | 775.0 | 3000.0 | 1200.0 | 1300.0 | 1400.0 | 1500.0 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | վարձավճարներ | | | | | | | |
| | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | 14005.088 | 14046.642 | 13436.0 | 7800.0 | 8000.0 | 8300.0 | 8500.0 |
| 3.4 | **Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից,** այդ թվում | 5357.1 | 5354.1 | 5354.1 | 5400.0 | 5400.0 | 5500.0 | 5600.0 |
| | Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | 5357.1 | 5354.1 | 5354.1 | 5400.0 | 5400.0 | 5500.0 | 5600.0 |
| 3.5 | **Վարչական գանձումներ** | | | 124700.0 | | | | |
| | Տեղական վճարներ | 2844.0 | 88541.265 | 85096.5 | 100000.0 | 101500.0 | 101500.0 | 102500.0 |
| | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | 12909.4 | 8121.17 | | | | | |
| | Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ | 54687.038 | 80420.095 | | | | | |
| 3.6 | **Մուտքեր տույժերից, տուգանքներից** | 1430.0 | 409.710 | 7020.0 | 1300.0 | 1400.0 | 2000.0 | 2500.0 |
| | Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | | 409.710 | | | | | |
| | Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից | | | | | | | |
| 3.7 | **Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ** | | | | | | | |
| 3.8 | **Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ** | | | | | | | |
| 3.9 | **Այլ եկամուտներ*** | 5745.02 | 5745.02 | 22010.0 | 10600.0 | 11000.0 | 12000.0 | 13000.0 |
| | Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր | | | | | | | |
| | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | | | | | | | |
| | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | | 1252.6 | 22010.0 | 1800.0 | 1900.0 | 2000.0 | 1700.0 |
| II. | **ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)** | 69419.83 | 41783.262 | 50000.0 | 52700.0 | 53000.0 | 42420.0 | 54400.0 |
| 1 | **Հիմնական միջոցների իրացումից մուտքեր** | | | 5000.0 | 5000.0 | 5000.0 | 5000.0 | 5000.0 |
| | Անշարժ գույքի իրացումից մուտքեր | | | | | | | |
| | Շարժական գույքի իրացումից մուտքեր | | | | | | | |
| | Այլ հիմնական միջոցների | | 252.0 | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | իրացումից մուտքեր | | | | | | | |
| 2 | Պաշարների իրացումից մուտքեր | | | | | | | |
| 3 | Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր | | | | | | | |
| 4 | Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | | | | | | | |
| | Հողի իրացումից մուտքեր | 69419.83 | 41531.262 | 45000.0 | 47700.0 | 48000.0 | 48700.0 | 49400.0 |
| | Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | | | | | | | |
| III. | ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ) | | | | | | | |
| Ա. | ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2) | | | | | | | |
| 1 | ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ | | | | | | | |
| 1.1 | Արժեթղթեր | | | | | | | |
| | -թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | | | | | | | |
| | -հիմնական գումարի մարում | | | | | | | |
| 1.2 | Վարկեր | | | | | | | |
| | -վարկերի ստացում | | | | | | | |
| | -ստացված վարկերի հիմնական գումարի մարում | | | | | | | |
| 1.3 | Փոխատվություններ | | | | | | | |
| | -բյուջետային փոխատվությունների ստացում | | | | | | | |
| | -ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | | | | |
| 2 | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ | | | | | | | |
| 2.1 | Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն | | | | | | | |
| | -համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր | | | | | | | |
| | -իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր | | | | | | | |
| | -բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում | | | | | | | |
| 2.2 | Փոխատվություններ | | | | | | | |
| | -նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր | | | | | | | |
| | -փոխատվությունների տրամադրում | | | | | | | |
| 2.3 | Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը | 796.532 | 351.293 | 14017.0 | | | | |
| 2.4 | Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս | | | - | - | - | - | - |
| 2.5 | Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | միջոցների վերադարձ ֆոնդային մաս | | | | | | | |
| 2.6 | Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում | | | | | | | |
| | որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը | | | | | | | |
| Բ. | ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | | | | | | | |
| 1 | ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ | | | | | | | |
| 1.1 | Արժեթղթեր | | | | | | | |
| | -թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | | | | | | | |
| | -հիմնական գումարի մարում | | | | | | | |
| 1.2 | Վարկեր | | | | | | | |
| | -վարկերի ստացում | | | | | | | |
| | -ստացված վարկերի հիմնական գումարի մարում | | | | | | | |
| 1.3 | Փոխատվություններ | | | | | | | |
| | -փոխատվությունների ստացում | | | | | | | |
| | -ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | | | | |

*) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

Աղյուսակ 4. Համայնքի 2019-2023թթ. բյուջեն
( եկամտների և ծախսերի կանխատեսումը)

| Եկամտի և ծախսի տեսակը | 2018թ. տարեկան պլան | 2019թ. կանխ. | 2018թ փաստ.նկատ % | 2020թ. կանխ. | 2018թ փաստ.նկատ % | 2021թ. կանխ. | 2018թ փաստ.նկատ % | 2022թ. կանխ. | 2018թ փաստ.նկատ % | 2023թ. կանխ. | 2018թ փաստ.նկատ % |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդամենը եկամուտներ | **1335001.90** | **1303517.8** | **-2.35** | **1220335.6** | **-8.5** | **1131335.6** | **-15.2** | **1138235.6** | **-14.7** | **1144335.6** | **-14.7** |
| Հարկային եկամուտներ, որից | 154000.0 | 259050.0 | 68.2 | 211700.0 | 37.5 | 213500.0 | 38.6 | 220600.0 | 43.2 | 224200.0 | 45.5 |
| Հողի հարկ | 49500.0 | 51500.0 | 4.04 | 35300.0 | -29 | 35500.0 | -28.3 | 40000.0 | -19.1 | 42000.0 | -15.2 |
| Գույքահարկ | 104500.0 | 173900.0 | 66.4 | 144400.0 | 38.2 | 145500.0 | 39.2 | 147600.0 | 41.2 | 148700.0 | 42.3 |
| Տեղական տուրքեր | 33300.0 | 33650.0 | 1.05 | 32000.0 | -3.9 | 32500.0 | -2.4 | 33000.0 | -0.9 | 33500.0 | 0.6 |
| Պաշտոնական ընթացիկ դրամաշն. | 656289.9 | 689635.6 | 5.08 | 699635.6 | 6.6 | 699635.6 | 6.6 | 699635.6 | 6.6 | 699635.6 | 6.6 |
| Այլ եկամուտներ | 401229.3 | 289117.5 | -27.9 | 245300.0 | -38.8 | 153700.0 | -61.7 | 153000.0 | -61.9 | 155100.0 | -61.3 |
| Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր | 90000.0 | 50000.0 | 44.4 | 55700.0 | -38.1 | 57000.0 | -36.7 | 58000.0 | -35.6 | 59500.0 | -33.9 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տարեսկզբի ազատ մնացորդ | 182.7 | 14017.0 | | | | | | | | |
| **Ընդամենը** | | | | | | | | | | |
| **Ընդամենը ծախսեր** | **1245001.9** | **1253517.8** | **0.7** | **1220335.6** | **-1.98** | **1131335.6** | **-9.1** | **1138235.6** | **-8.6** | **1144335.6** | **-8.09** |
| Ընթացիկ ծախսեր, այդ թվում | 1223477.3 | 1246092.0 | | | | | | | | |
| Տեղ. ինքնակառ. մարմնի, դրանց ենթ-հիմն. աշխատ. աշխատավարձ | 290685.220 | 293138.6 | 0.84 | 292396.6 | 0.6 | 293396.6 | 0.9 | 294396.6 | 1.3 | 295396.6 | 1.6 |
| Ապրանքն. գնման և ծառ. վճ. ծախս | 190764.88 | 186823.2 | -2.07 | 187823.2 | -1.5 | 186000.0 | -2.5 | 188000.0 | -1.4 | 187000.0 | -1.9 |
| Սուբսիդիաներ | 666135.0 | 694181.0 | 4.2 | 694200.0 | 4.21 | 695000.0 | 4.3 | 695500.0 | 4.4 | 696000.0 | 4.5 |
| Դրամա-շնորհներ | 46395.5 | 38935.0 | -16 | 40000.0 | -13.8 | 42000.0 | -9.5 | 39000.0 | -16 | 39000.0 | -16 |
| Սոցիալական նպաստներ | 15520.0 | 12300.0 | -21 | 13000.0 | -16.2 | 14000.0 | -9.8 | 13000.0 | -16.2 | 12000.0 | -23 |
| Այլ ծախսեր | 5258.4 | 22466.2 | - | 22400.2 | - | 22300.2 | - | 22200.2 | - | 22000.2 | - |
| Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, այդ թվում | 111524.6 | 57425.8 | -49 | 58425.8 | -48 | 58425.8 | -48 | 59000.0 | -47 | 59000.0 | -47 |
| Հիմնական միջոցներ | 111524.6 | 50000.0 | -55 | 49000.0 | -56 | 47000.0 | -58 | 44000.0 | -60.5 | 40000.0 | -64.1 |

## 2.5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կապիտալ վերանորոգման և բարեկարգման կարիք ունեն նախադպրոցական հիմնարկները, մշակույթի շենքերն ու շինությունները, բակային տարածքները.

- գործազրկության բարձր մակարդակը, սոցիալապես անապահով և ծայրահեղ աղքատ բնակչության բարձր տոկոսը, ցածր աշխատավարձի առկայությունը
- 50 տարի առաջ կառուցված թեք տանիքներով բազմաբնակարան շենքերի տանիքները
- կոյուղագծերի և ոռոգման ջրի անմխիթար վիճակը
- քաղաքի նյութատեխնիկական բազան հզորացնելու համար անհրաժեշտ է ֆինանսական խոշոր միջոցների ներդրում:
- Ոռոգման ջրի ներքաղաքային համակարգի մաշվածությունը

Քաղաքի տարածքում մեծ թվով ծեռնարկությունների գործունեության դադարեցումը դժվարություններ է առաջացրել քաղաքի բյուջե մուտքագրվող հողի հարկի և գույքահարկի գանձման գործընթացում:
Ցածր է քաղաքի տարածքում գործող համատիրությունների գործունեության արդյունավետությունը: Համատիրությունների համակարգի մասին Հայաստանի Հանրապետության օրենքը զգալի բարեփոխումների կարիք է զգում, հակառակ դեպքում վտանգվում է քաղաքի բնակֆոնդի պահպանումն ու շահագործումը:

Նշված հիմնահարցերի լուծման համար առկա դժվարությունները կապված են հիմնականում համայնքի եկամուտներից: Համայնքը չունի անհրաժեշտ եկամուտներ՝ իր առջև դրված հիմնահարցերը միանգամից լուծելու համար:

## 2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ (ՈւԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Քաղաքը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի մարզկենտրոնն է, մայրաքաղաքից գտնվում է 40կմ հյուսիս-արևելք: Համայնքի վարչական տարածքով են անցնում Երևան-Սևան, Երևան- Ծաղկաձոր, Երևան- Հանքավան միջպետական մայրուղիները:
- Քաղաքի վարչական տարածքը 99 %-ով գազաֆիկացված է:
- Առկա են հեռուստակայանը, հեռախոսակապը, բջջային կապի 3 օպերատոր, առևտրի հիմնական օբյեկտները, ոռոգման ներքաղաքային համակարգը:
- Տարածքում կան բազալտի, ասֆալտի, խճաքարի հանքեր, ցեմենտի ստացման տեխնոլոգիական հիմքեր, որն օգտագործվում է համայնքի կարիքների համար:
- Հրազդան քաղաքի տարածքում ժամանակին գործել են հզոր արտադրական միավորումներ և գործարաններ, որոնց մեծ մասը չեն աշխատում: Այդ գործարանների ինժեներատեխնիկական և բանվորական անձնակազմերի մի մասը գտնվում է արտերկրում, բայց գերակշռող աշխատուժը գտնվում է համայնքում:
- Հայաստանի Հանրապետության տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններ ավարտած ավելի քան 2000 երիտասարդներ կան, առաջացել է աշխատուժի մեծ պոտենցիալ /ինժեներներ, մանկավարժներ, տնտեսագետներ, իրավաբաններ, ռադիոտեխնիկներ, էներգետիկներ, շինարարներ, խառատներ և այլն/:
- Քաղաքի տարածքում առկա ջրամբարների շահագործման դեպքում ջրի ամբարման հնարավորությունները կմեծանան:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Կապիտալ վերանորոգման և բարեկարգման կարիք ունեն նախադպրոցական հիմնարկները, մշակույթի շենքերն ու շինությունները, բակային տարածքները.
- 50 տարի առաջ կառուցված թեք տանիքներով բազմաբնակարան շենքերի տանիքները
- գործազրկության բարձր մակարդակը
- սոցիալապես անապահով բնակչության բարձր տոկոսը
- բնակչության ծայրահեղ աղքատների բարձր տոկոսը
- ցածր աշխատավարձի առկայությունը
- կոյուղագծերի և ոռոգման ջրի անմխիթար վիճակը
- քաղաքի նյութատեխնիկական բազան հզորացնելու համար անհրաժեշտ է ֆինանսական խոշոր միջոցների ներդրում:
- Աշխատատեղերի պակասը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Հեռանկարային ծրագրեր, ինչը կբերի ֆինանսական կայունության,
- Մեծ է աշխատուժի առկայությունը,
- Ունենալով հումանիտար և տեխնիկական կրթություն ունեցողների մեծ բանակ՝ տեղական ինքնակառավարման մարմիններում գործող համակարգը թույլ է տալիս կատարելագործել համայնքապետարանի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների կառուցվածքը,
- Համայնքի ղեկավարն ու ավագանին մեծ վստահություն ունեն բնակչության մեջ:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Ոռոգման ջրի ներքաղաքային համակարգի մաշվածությունը
- Ներքաղաքային կոյուղագծերի մաշվածությունը
- Քաղաքում գործազրկության բարձր տոկոսը
- Բնակչության անվճարունակ լինելը

